,, Թէլօյ Մուրատեան . .		30
,, Պետօյ Յարութիւնեան . .		50
,, Անդրէաս Ղզրէյեան . .	1	
,, Սարգիս Հայրապետեան .	1	
,, Յովսէփի հարսն՝ կինն Պետրոսի . . .	1	
,, Կինն Մելքի . .		20
,, Կինն Յովէի Ափրէի .		20
,, Գրիգոր Տէր Սահակեան .	1	20
,, Համբար Բօղոսեան .		60
,, Բաղտասար Օհանեան . .	1	
,, Յովէյ Պետրոսեան . .	1	
,, Պետրոս Կարապետեան . .	1	
,, Ենկօյ Սարգսեան . .	1	
,, Ասատուր Մուրատեան . .	1	
,, Յովհան Ղազօյեան . .	1	
,, Աբրահամ Պետրոսեան . .		40
,, Բարսեղ Սափարեան . .		40
,, Բաղդասար Յարութիւնեան .		20
,, Գասպար Տեփանեան . .		50
,, Պետրոս Գրիգորեան . .		40
,, Առաքել Խաչօյեան . .		40
,, Պօղոս Մուքէլեան . .		25
,, Երիցուհի Ս. ք. Վարթերն .		80
,, Աբրահամ Յարութիւնեան .		30
,, Իշանըեցի Յարութիւնն . .		25
,, Ղազար Տէր Յովսէփեան .		25
,, Գասպար Յակովբեան . .		25
,, Մովսէս Աթօյեան . .		40
,, Սերովբէ Սահակեան . .		10
,, Բասենցւոց Զարմանն . .		10
,, Բասենցւոց Մարգարիտն .		10
,, Սայեամի Հոռոմն . .		20
,, Գալուստ Վարդանեան . .		40
,, Բօզօյի կինն . . .		20
,, Մահտեսի Յակովբն . .	1	
,, Սարգիս Բօղօյեան . .	5	
,, Քեօսենց Խաչատուրն . .		10
,, Գըանի Տառուկ Գրիգորեան .	1	
,, Նիկողայոս Ղազօյեան . .	1	
,, Սարգիս Մանուկեան . .		50

(Շարունակելի)

ՍՈՒՐՀԱՆԴԱԿՔ ԲԻՒԶԱՆԴԵԱՆ·

ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Ի Փարիզ եղած Մուրատեան վարժարանի նպատակ և նորա հիմնադրին Սամուէլ Մուրատայ հարազատ Հայկազնւոյ իղձեր գուցէ սակաւուց ոմանց մերազնեայց քաջայայտ լինին. սակայն ոմանք ի Մխիթարեան Հարց ի բաւական ժամանակաց հետէ գրեթէ խապառ ներհակ ընթացից ըղ վարժարան մըելքն չգոհանալով, այս միջոցներում, ինչպէս Զմիւռնիոյ Արշալոյս լրագիրն կհաղորդէ, վարժարանը ծախելոյ և փողերը և դրամագլուխը բոլորովին օտար նպատակաց գործածելոյ հետամուտ եղած են ։

Այս առթիւ Պօլսոյ Օրագիր Լրագիրն խորին ուշադրութեան արժանի՝ գեղեցիկ և իրաւացի մի խորհրդածութիւն կհրատարակէ, զոր ստորև կհաղորդեմք մերազնեայց ընդ յօգուածոյ Արշալուսոյ։

Եթէ Կ.Պօլսոյ Ազգային Վարչութիւն կարևոր հանգամանօք և ծանօթութեամբք տեղեկագրէ առ Սրբազնագոյն Հայրապետ այս խնդրոյս համար, Նորին Սրբութիւն արժան և պէտք եղած միջոցները ի ձեռս առնլոյ համար երբէք չխնայեր իւր ջանքերը յօգուտ Եկեղեցւոյ մերում և Ազգի ։

Գուցէ ի յաջորդ թիւս կրկին գրեմք սոյն խնդրոյ համար ։

Ազգային այս վարժարանին վրայօք Փարիզի մեր մեծարգոյ թղթակցէն մեզ տրուած տեղեկութիւնքն խիստ տխուր և ցաւալի են ։

Յայտնի է թէ Մուրատեան վարժարանը՝ Հնդկաստանի բնակիչ նոյն անուամբ բարերար երևելի հայկազնոյ մը կտակին արդիւնքն է, և սահմա-

նեալ ի դաստիարակութիւն Հայ մանկտւոյն առանց խտրութեան կաթոլիկ և բուն Հայու։ Բայց ամէն մարդ գիտէ որ՝ մինչև ցայսօր այս վերջին պայմանն զանազան պատճառանօք ի գործ չդրուեցաւ յարժա. վարդապետաց Վենետկոյ Մխիթարեան Միաբանութեան, որուն յանձնուած է նոյն վարժարանին վարչութիւնն՝ զօրութեամբ կտակին մի յօդուածոյն։

Իսկ այժմ Փարիզէն կընծանուցանեն մեզ թէ Մուրատեան վարժարանը բոլորովին գոցուեր է և անոր մէկ մասը վարձու տրուելով ի Մխիթարեան վարդապետաց Վենետկոյ, դրամը իրենց անձնական պիտոյից կըգործածեն։ Բաց յայսմանէ կըհաւաստեն թէ Հասունեան գերապայծառին հետ համաձայնելով, յիշեալ վարդապետք ծախու հանած են այս ազգային ստացուածքը և գընող մի յերևան ելնելուն պիտի վաճառեն զայն, և արժէքը անտարակոյս Հասունեանին տնօրէնութեանը համեմատ պիտի գործածուի։ Ցայտնի է թէ ի սկզբան այս գլխաւոր եկեղեցականն չուզեց որ Մուրատեան դպրոցն ի Վենետկոյ փոխադրուի ի Փարիզ, այլ կուզէր ի Հռոմ բերել տալ զայն։ Զիարդ և իցէ, այն ժամանակը չկըրցաւ իր կամքը յառաջ տանիլ. իսկ այժմ կրօնական իրաց վիճակը փոխուելով՝ պապական անսխալութեան Նոր վարդապետութիւնն հաւատոյ էական մէկ մասն համարեցաւ. ուստի Վենետկոյ Մխիթարեան Միաբանութիւնն պարտաւորեցաւ ընդունել զպապական անսխալութիւնն, և հետևապար հարկ եղաւ նմա նաև ճանաչել և ընդունել զՀասունեան գերապայծառն իբրև Պատրիարք Հայ կաթոլիկաց՝ կարգեալ Ս. Պապին անսխալ հրամանաւն։

Եւ որովհետև Հակահասունեան բազմաթիւ Հայ ժողովուրդն յաջողեցաւ ի Կ. Պօլիս իւր ձեռաց ներքև առնուլ Թուրքաստանի մէջ եղած կաթոլիկ Հայ եկեղեցիներն և անոնց անշարժ ըստացուածքը, ուստի ըստ երևմանց՝ Հասունեան գերապայծառն ևս փութացաւ, ի վրէժխնդրութիւն, զՄուրատեան դպրոցն իւր ձեռաց ներքև դնել։

Բայց այս դպրոցն Վենետկոյ Մխիթարեան միաբանութեան չվերաբերիր, այլ ընդհանուր Հայոց ազգին ստացուածքն է, և նորա տեսչութիւնն միայն յանձնուած է Մխիթարեան Միաբանութեան, ինչպէս կտեսնուի ազգային բարերար՝ Սամուէլ Մուրատեանի կտակէն, որոյ բուն օրինակն Անգղիոյ տէրութեան դիւանատունը պահուած է։ Վասն որոյ Մխիթարեան վարդապետք ամենևին իրաւունք չունին վաճառելոյ կամ փակելոյ ըզՄուրատեան վարժարանն։

Ուստի Կ. Պօլսոյ ազգային վարչութեան, նմանապէս Հակահասունեան Հայ ժողովրդեան ծանր ուշադրութիւնն կըհրաւիրեմք այս կարևոր գործոյն վրայօք, որ դիւրաւ կրնայ կարգադրուիլ արդարութեան սկզբանց համեմատ, եթէ յիշեալ համազգի ժողովուրդքն միաբանելով, բողոքագիր մի մատուցանեն Գաղղիոյ կառավարութեանըն՝ միջնորդութեամբ Բ. Դրան։

Կ. Պօլսոյ Հայ լրագրաց՝ մեր պաշտօնակից եղբարց ազգասիրական ուշադրութիւնն ևս կըհրաւիրեմք այս ծանրակշիռ խնդրոյն վերայ, աղաչելով զնոսա որ հոգ տանին մեր ներկայ յօդուածն իրենց թերթերուն մէջ ևս հրատարակել, զարթուցանելու համար ազգային եռանդն ամեն տեղ յօգուտ ընդհանրութեան Ազգիս։

Արշալոյս Արարատեան Թ. 973. Հոկ. 20։

Ահաւասիկ Օրագրի խորհրդածութիւնըն ևս։

Մուրատեան վարժարան մը ունինք ի Բարիզ՝ կտակեալ ի Սամուէլ Մուրատեան ազգային բարերարէ յանուն ընդհանուր Հայոց ազգի, և տեսչութիւնն յանձնեալ Մխիթարեան միաբանութեան։

Մխիթարեան միաբանութիւնն ընդունելով վերջերս Պապին անսխալականութիւնը՝ անոր հլու գործիք Հասունեանի հրամանաւ այժմ ելեր գոցեր է այդ վարժարանը և շէնքն ալ ծախու հաներ է կըսեն։

Ասոր դէմ կըսէ Արշալոյս՝ Հայոց Կ. Պօլսոյ Ազգային Վարչութիւնը միանալով Հակահասունեանց հետ՝ բողոքագիր մը մատուցանելու են Գաղղիոյ կառավարութեան՝ միջնորդութեամբ Բ. Դրան։

Արշալոյս նախ կը սխալի այդ բողոքագիրը՝ եթէ երբէք տալ պէտք է՝ տալու իրաւունքը Կ.

Պոլսոյ Ազգային վարչութեան տալով, զի Կ. Պոլսոյ Ազգային վարչութիւնը կամ Պատրիարքութիւնը ամենայն Հայոց Պատրիարքութիւնը չէ, այլ ամենայն Հայոց պատրիարքութիւնը Էջմիածնայ Վեհ. Հայրապետութիւնը կամ Պատրիարքութիւնն է, հետեւաբար նա միայն իրաւունք ունի յանուն ամենայն Հայոց ըլլալիք բողոքն ընել առ որ անկ է, Արշալոյսի այս սխալը թերեւս Խրիմեանի ինքզինք Պատրիարք Հայոց կոչելէն յառաջ եկած ըլլայ. սակայն Խրիմեանի այդ տիտղոսն իսկ իր վրայ առնելը՝ Էջմիածնայ իրաւանց դէմ բռնաբարութիւն մ'է, զի Ամեն. Խրիմեան Պատրիարք՝ է Կ. Պատրիարք, Ամեն. Եսայի Պատրիարք՝ է Երուսաղեմայ Պատրիարք եւ Վեհ. Գէորգ Կաթողիկոս՝ է ամենայն Հայոց Պատրիարք. այսպէս կը յիշատակուին առոնք Եկեղեցեաց մէջ. այս է իրենց տրուած տիտղոսը Սահմանադրութեան մէջ. իսկ եթէ մինչեւ ցարդ չը բողոքեց Վեհ. Գէորգ Կաթողիկոսն Խրիմեանի իր տիտղոսը բռնաբարելուն դէմ, պատճառն ոչ այլ ինչ է՝ բայց եթէ խնդիր մ'ալ այդ առթիւ չը յարուցած ըլլալու մեծ խոհեմութիւնը։

Կը մնայ ուրեմն քննել թէ՝ այդպիսի բողոք մը ընել պէ՞տք է, թէ ոչ։

Այո՛, բողոք մը պէտք է, բայց ոչ թէ միայն անոր համար որ այդ վարժարանը գոցելու կամ ծախելու ելեր է Մխիթարեան միաբանութիւնը հրամանաւ Պապին, այլ բողոք մը պէտք է՝ Մխիթարեան միաբանութիւնը Պապին անսխալական նոր դաւանութիւնն ընդունելէն վերջը՝ այդ կտակին տրամադրած Մխիթարեան միաբանութեան հանգամանքը կորուսած ըլլալովը՝ այլ եւս այդ վարժարանին տնօրէնութեան իրաւունքէն զրկուած ըլլալուն համար։

Ի՛նչ կը նշանակէ բողոքոյ ձեւին տակ՝ ստորագրութիւն տալ աշխարհի թէ մեք Պապին անսխալականութիւնն ընդունող Մխիթարեան վարդապետաց մեր մանկանց տալիք դաստիարակութիւնը կընդունինք։

Ոչ մէկ Մուրատեան վարժարան՝ այլ եթէ միլիոն Մուրատեան կորսնցնելու ալ վտանգը ըլլայ դէմերնիս՝ յաւիտեան չենք կրնար այդպիսի ստորագրութիւն մը տալ, զի ազգասպանութիւն է այդ։

Բայց աւելին, չենք կրնար միանալ մասին այս Հակահասունեանց հետ, զի եթէ Հասունեանք անսխալ Պապը կընդունին՝ առոնք ալ Պապը կընդունին, զի եթէ Հասունեանք այդ վարժարանին մէջ անսխալ Պապին գլխաւորութիւնը պիտի քարոզեն, առոնք ալ Պապին գլխաւորութիւնը պիտի քարոզեն։

Կարելի՞ է արդեօք յուսալ կամ հաւատալ թէ քաթոլիկ վարդապետ մը որչափ ալ ազատամիտ եւ ո՛ր կուսակցութենէ կուզէ ըլլայ՝ ըստ որում՝ քաթոլիկ վարդապետ՝ իր ձեռքն յանձնուած մատաղ սերնդեան՝ այլ եւ այլ խաբէական միջոցներով Պապին գլխաւորութիւնը չը քարոզէ, եւ կամ անոր հակառակ գաղափարներ տայ։ —Անկարելի է այդ։

Մուրատեան վարժարանը ամենայն Հայոց կրտակեալ, ուրեմն ինչ որ ամենայն Հայոց է, պէտք է այն աւանդել հոն։ Քաթոլիկութիւնը իր ամեն բաժանմամբը ամենայն Հայոց չէ, Բողոքականութիւնը ամենայն Հայոց չէ. այս երկուքը քանի որ կան պաշտօնապէս՝ մերն ալ ամենայն Հայոց չը սեպուիր օտար կառավարութեանց դատաստանատան առջեւ, զի ամենայն Հայք ըսելով՝ քաթոլիկն ու բողոքականն ալ միասին պէտք պիտի ըլլայ առնել. ուրեմն հոն ինչ որ եւ է կրօնք պէտք չէ աւանդել, զի ամենայն Հայոց կրօնական միութիւնը երեքի բաժնուած է, մինչդեռ կրտակն եղած ժամանակ ամենայն Հայոց կրօնքը պաշտօնապէս մի էր, եւ ամենքը Էջմիածնայ ամենայն Հայոց Կաթողիկոսութեան իրաւասութեանը տակ։

Արդ եթէ պէտք է բողոքել՝ այդ ալ բոլորովին այս հիման վրայ կարելի է, այն է բողոքել որ՝ այդ վարժարանին մէջ որ եւ է կրօնք դաս չը տրուի եւ որ եւ է եկեղեցական դասատուութիւն չըլլայ, Մխիթարեան միաբանութեան թողլով միայն ըստ կտակին նիւթական տնօրէնութիւնը. իսկ եթէ չընդունին այս առաջարկութիւնը մենէ բաժանեալ Հայերն, այն ատեն լաւ է որ՝ վարժարանը ծախուի եւ ստակը ազգային անհատական թուոց բազմութեամբ յանուն իւրաքանչիւր բաժանման ներկայացուցիչներուն՝ յանձնուի պանքայի մը, որմէ իրեն ինկած բաժինն առնել երբ կտա-

կին տրամադրած պայմաններով վարժարան բանան ։

Սակայն չը մոռնանք դարձեալ յիշել՝ որ այս մասին իրաւասութիւն ունեցող միակ մարմինը յանուն ամենայն Հայոց՝ Էջմիածնայ Կաթուղիկոսութիւնն է, որ իւր իրաւասութիւնը կը գործադրէ Ռուսիոյ՝ Անգղիոյ և Տաճկաստանի կառավարութեանց միջոցաւ՝ իբրև կառավարող տէրութիւնք ամենայն Հայոց ։

Օրագիր Թ. 1076. Հոկտ. 27.

ՆՈՒԷՐ

ԲԱՐՍԵՂ ՀԱԼԱՃԵԱՆԻ.

Մեծ. Հալաճեան Բարսեղ էֆէնտի այս շաբաթ ընկերակցութեամբ Մեծ. Գէորգ էֆէնտի Զարգարեանի Ազգ. Հիւանդանոցի վարժարանը այցելութիւն ընելով և զայն իւր արդի վիճակին մէջ գոհութեան և շնորհակալեաց արժանի լինելուն գործնապէս վկայելու համար՝ ամիսն 100 ղշ. ամսական թոշակ յատկացուց (բաց ի սովորական նուէրներէն որ տարին 10—20 ոսկի կը հանի), և այն պայմանաւ որ ցորչափ իւր գերդաստանը շարունակէ՝ նոյն ամսականն ալ շարունակէ։

Փափաքելի էր որ Մեծ. Հալաճեան էֆէնտիի սոյն ազգասիրական և արդիւնաւոր այցելին և օրինակին հետևէին ուրիշ մեծատուն Ազգայիններն ալ՝

Նոյն. Թ. 1072 Հոկտ. 23

Մեր ընթերցողաց յայտնի պիտի լինին Կ. Պօլսոյ Պատրիարքի իրաւասութեան ներքև եղած Ասորւոց ձգտումը, յորոց Հայք ոչ մի օգուտ չունենալէն զատ՝ և ոչ իսկ կարօտութիւն ունին և սովորմունք կգործեն նոցա վերայ. ուստի միայն իբրև ժամանակակից անցք և տեղեկութիւն կյաւելումք հետևեալները հրատարակել, թէև սոցա մէջ հետաքրքրական և օգտաւէտ պարագաներ ևս կան մերազնեայ բանիմաց ընթերցողաց համար ։

ԱՍՈՐՒՈՑ ԽՆԴԻՐ

Լրագրոյս 829րդ թուոյն՝ Տիգրանակերտէն Ասորւոց վրայ տրուած տեղեկութիւն մը հրատարակած, և մեր կողմանէ ալ քանի մը խօսք աւելցուցած էինք.

Ասորւոց գեր. Կաթողիկոսին արժ. Փոխանորդըն՝ իբր պատասխանի յիշեալ յօդուածոյն՝ հետևեալ նամակը գրկած է մեզ, որ արժանի է ուշադրութեան.

. . . Խմբագիր

Լրագրոյդ 829 թուոյն մէջ Տիգրանակերտէն եկած նամակի մը պարունակութիւնը հրատարակուած էր, որուն մէջ՝ Ասորիք իբրև թէ Արժ. Պետրոս Պատրիարքի Բ. Դռնէն Պատրիարքութեան հրովարտակ և պատուոյ նշան ընդունած ըլլալուն՝ և Հայոց Պատրիարքարանի իրաւասութենէն ելած ըլլալուն կը խռովին եղեր . . . Խմբագիր, դուք ալ ասոր վրայ դիտողութիւն ընելով այսպէս կըսէք, թէ՝ „Ասորիք իզուր կը խըռովին, որովհետև Բ. Դուռն դեռ այս մասին որ և է տնօրինութիւն ըրած չէ, թէպէտ և Ասորւոց Պատրիարքին կողմանէ առաջարկութիւն եղած է Բ. Դռան, բայց Հայոց Պատրիարքարանի և Բ. Դըռան մէջ խնդիրը մնաց ի կախ. բաժանման խնդիրըն ընող Պատրիարքին ընտրութիւնը վաւերացած չէ տակաւին, և կարծեմք Ասորւոց մեծագոյն մասն չեն ուզեր պատրիարքանալն ևն. „ ։ Վերոգրեալ նամակը իւր ստորոտը ստորագրութիւն չունենալուն, մեզ համար կարևորութիւն չունի, և փոքրամասնութեանց ալ մնալ մեզ անվայել, միայն գործոյն համառօտութիւնը ի գիր առնել ձեզ կը հաղորդեմ, որպէս զի այս խնդրոյն նըկատմամբ նամակ կամ՝ որ և է գրութիւն մը եթէ հրատարակէք՝ արդարութենէ չըշեղէք. Արժանապատիւ Պետրոս Պատրիարքի ընտրութիւնը վաւերացումը և օծումը եղած, և բոլոր Ասորիք Պատրիարքը ընդունած լմնցած խնդիր մ՚է. անիկայ բնաւ տարակոյս չը վերցներ, և ասկէց յայտնի կերևայ թէ ձեզի տեղեկութիւն տուող նամակին հեղինակը կամ ինքը Ասորի չէ, կամ, եթէ է, ուրեմն մեր ազգի վրայ բնաւ գաղափար մը չունի եղեր. հոս արժան է ուրեմն պատմել ընտրութիւնը համառօտիւ